ԱՅՍՊԻՍԻ ՔԱՆԵՐ

ՀՀ ԱԱԾ հայտարարությունը

ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը տեղեկացնում է, որ ՀՀ Կառավարության աշխատակազմի Մամուլի ու հասարակայնության հետ կապերի գծով խորհրդական Արմեն Արտաշեսի Ավետիսյանի նկատմամբ իրականացված մահափորձի կազմակերպիչների կամ մասնակիցների մասին արժեքավոր տեղեկություններ տրամադրող քաղաքացիներին կտրվի դրամական խոշոր պարգև: Տեղեկատու անձանց գաղտնիությունը երաշխավորվում է: Հեռախոսներ՝ 52-95-96, 56-35-15:

ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺ

ԱՐՏԱՀԵՐԹ ԲԱՆԵՐ ՉԱՆԵՆՔ



ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ի զարմանս բոլոր գիտնականների, երեկ մինչև վերջ ներկա գտնվեց, սկանդալային ընթացք եւ նույնիսկ սկանդալային ավարտ ունեցավ:

ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը ժողովը սկսեց հայ մտավորականների եւ գիտնականների համար շատ սովորական դարձած լացով ինչպես միշտ այն մասին, որ ֆինանսական միջոցները չեն բավարարում գիտական աշխատանքների համար: Բայց շատ անսպասելիորեն վարչապետ Անդրանիկ Մարգարյանն այս շատ սովորական լացին բոլորովին ոչ սովորական ձեւով արձագանքեց: Պարոն Մարգարյանը երեկ գիտնականներին ասաց բաներ, որ մինչ այժմ, իհարկե, շատերի կողմից է ասվել, սակայն ոչ երբեք վարչապետի: Իսկ վերջինս գիտնականներին ասաց, որ նրանք ծերացած եւ հոգնած են, որ փակել են երիտասարդների ճանապարհը, որ միշտ փող ուզողի դերում են, մինչդեռ գործնականում ոչինչ չեն անում: «Ես ասում եմ՝ առաջարկություններ ներկայացրեք, պատրաստ եմ փողը տալ, դուք գալիս եք ոչինչ չեք ասում: Ինչքան էլ միջոցներ տրամադրենք, մեր խնդիրները չեն լուծվի, քանի որ մենք արդյունքներ չենք տեսնում: Մենք պատրաստ ենք էլի լացուցիչ գումարներ տալ, բայց հանուն ինչի... Ասում եք՝ ստեղծենք, ասում ենք՝ ի՞նչ ստեղծեք, ասում եք չգիտենք: Ես պատասխան չեմ ստանում»,- երեկ ժողովի ընթացքում ասում էր ՀՀ վարչապետը: Ըստ Անդրանիկ Մարգարյանի, պետության եւ գիտության միջեւ կապի խզումն առաջացել է ակադեմիայից. «Հոգնածություն եմ զգում, արմատական փոփոխությունների անհրաժեշտություն կա»,- հայտարարեց վարչապետը: Բացի այդ, նա նշեց, որ բյուջեով 2004 թվականին երեք միլիարդ երեք հարյուր քսանհինգ միլիոն դրամ է հատկացվել ԳԱԱ-ին, իսկ 2005-ին՝ չորս միլիարդ հարյուր երեսուն միլիոն: Մինչդեռ նույնիսկ այն հարցերը, որ կարող են օպերատիվ լուծում ստանալ, գիտնականների ջանքերով դառնում եւ «հայոց հարց»: Իսկ որ ամենակարեւորն է, Անդրանիկ Մարգարյանը գիտնականներին մեղադրեց անդեմության եւ վախկոտության մեջ. «Ակադեմիան շաղհոփորձանքից հեռու կեցվածք է ընդունել, այդպես չպետք է լինի, պետք է ամեն ինչի մասնակցեք, որ ինչ-որ հարց լուծեք»,- մի ամբողջ դահլիճ վախեցած գիտնականների ամոթանք տվեց Հայաստանի կառավարության ղեկավարը: Իհարկե, բոլորն էին հասկանում, որ մեղադրանքների այս ամբողջ տարափն առաջին հերթին թափվում է ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանի գլխին: Եւ թերեւս հենց դրանցից ոգեւորված՝ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանների տնօրեն Հանրի Ներսիսյանն առաջարկեց անվավեր ճանաչել ԳԱ նախագահության վերջին ընտրությունները: Ակադեմիկոս Ներսիսյանը հայտարարեց, որ ակադեմիայի նախագահությունն անբավարար է աշխատում, ֆինանսական միջոցները ճիշտ չեն բաշխվում, իսկ Ֆադեյ Տաճատիչին մեղադրեց փողեր լվանալու մեջ: Ընդհանրապես փողային եւ նմանատիպ «բազարներ» երեկ ակադեմիայի ժողովի ընթացքում մի քանի անգամ եղան: Օրինակ՝ ակադեմիկոս Կոնստանտին Ղարագյոզյանը հիշեցրեց, որ իրենց աշխատավարձը ընդամենը 22 հազար դրամ է, բացի այդ, վարչապետից պահանջեց իր այցելությունների ժամանակ պատվիրակության կազմում նաեւ խոշոր գիտնականների ընդգրկել: Բացի այդ, ըստ Ղարագյոզյանի, Անդրանիկ Մարգարյանն այնքան ուժ եւ հեղինակություն ունի, որ կարող է իր մոտ կանչել տարբեր գործարարների եւ ամենքին գիտության մի ճյուղի կցել: Ինչեւէ, ակադեմիկոսը նաեւ չմոռացավ իր ելույթում ընդգծել Ֆադեյ Տաճատիչի անձնվեր եւ տիտանական աշխատանքը. «Եթե չլիներ Ֆադեյ Տաճատիչը, վաղուց այս շենքը ձեռքից գնացած կլիներ, իսկ ԳԱԱ-ն վերացած»,- ասաց նա, եւ դահլիճում նստած ակադեմիկոսները նույնիսկ փորձեցին ծափահարել այս խոսքի վրա: Կարծում ենք՝ ավելորդ է նշել, որ ԳԱԱ նախագահության վերջին ընտրությունն անվավեր ճանաչելու առաջարկությունն այդպես էլ աջակցություն չստացավ: Ֆադեյ Սարգսյանն այդ պահին ընդմիջում հայտարարեց, եւ վարչապետի ու ԿԳ նախարար Սերգո Երիցյանի հետ առանձնացավ մի սենյակում, որտեղից մի քանի վայրկյան անց ղժղժոցներ էին լսվում: Ըստ որոշ տեղեկությունների՝ գոռացողը Ֆադեյ Տաճատիչն էր: Թե որքանով է սա համապատասխանում իրականությանը, դժվար է ասել, սակայն այդ սենյակից Ֆադեյ Տաճատիչը ակնհայտորեն բավարարված տեսքով դուրս եկավ: Իսկ Անդրանիկ Մարգարյանը, պատասխանելով մեր այն հարցին, թե նշելով, որ հոգնածություն եւ արմատական փոփոխությունների անհրաժեշտություն է տեսնում, արդյո՞ք ինքն ի նկատի ուներ, որ ԳԱԱ պրեզիդենտի պաշտոնում Ֆադեյ Սարգսյանին պետք է նոր ուժով փոխարինել, ասաց. «Սա այնպիսի ծանր բնագավառ է, որ մեկ անհատից շատ բան չէ կախված: Այսինքն՝ Ֆադեյ Տաճատիչի ցանկությունից չի կախված, ինքը ցանկություն ունի... Հա, ինչ-որ մեկը առաջարկեց վերաքվեարկել, բայց ես դեմ եմ, ժամկետից դուրս վերաքվեարկությունը բնավորության գիծ չդառնա, ամիսը մեկ մի ակադեմիկ վեր կենա առաջարկի անվստահություն հայտնել նախագահությանը, նախագահին»,- հայտարարեց ՀՀ վարչապետն ավելացնելով, որ ինքն ընդհանրապես արտահերթ ցանկացած բանի դեմ է: Այսպիսով, չի բացառվում,որ Ֆադեյ Տաճատիչը իր գոռգոռոցներով վարչապետին ակնարկած լինի, որ ինքն ու իր կառավարությունը նույնպես անվստահության քվե ստանալու հիմքեր ապահովել են իրենց համար: Սա, իհարկե, անհրաժեշտ ազդեցություն անպայման կգործեր վարչապետի վրա, որպեսզի նա դեմ լիներ ցանկացած արտահերթ բանի: Թե չէ, ով գիտի՞, մեկ էլ տեսար բնավորության գիծ դառնա՝ ամիսը մեկ մեկը վեր կենա անվստահություն հայտնի վարչապետին, կառավարությանը, իշխանություններին, երկրի նախագահին:

Հ.Գ. Երեկ Ֆադեյ Տաճատիչն, իհարկե, քվեարկության դրեց Հանրի Ներսիսյանի առաջարկությունը քննարկման դնելու հարցը: Կողմ քվեարկեց միայն Հանրի Ներսիսյանը: Իսկ բազմաթիվ դողդոջուն ձեռքեր օդ բարձրանալու ճանապարհի կեսից կանգնեցին ու կրկին իջան ցած:

ԱՆՆԱ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ